

Այս բոլորի հիման վրայ, պետական տեսակետից, ես կարծում եմ, որ հայկական հարցը, որպէս այդպիսին, կայ միայն մինչեւ պատերազմի սկիզբը զոյաթիւն ունեցող կայսերական սահմաններից այն կողմը, այսինքն՝ մեր կողմից նուաճուած թիւրքական վիլայէթները չըջանում:

Ձեր ներկայացրած հարցի էութեանն անցնելով՝ ես վերին աստիճանի ուրախ եմ նկատելու իմ տեսակետի կատարեալ նոյնութիւնը Ձեր արտայայտած մտքերի հետ:

Ի հարկէ, Ռուսաստանը, որ ամենից աւելի եռանդով է պաշտպանել թիւրքահայաստանի լայն բարենորոգումների պահանջը, չի կարող հաշուի չառնել այն տառապանքները, որ հայ ժողովուրդը քաշել է ներկայ պատերազմի ընթացքին, իրբեւ հետեւանք մահապահան ճնշումների: Կասկած չի վերցնում, որ թիւրքիայից նոր նուաճուած շրջանների կարգաւորման միջոցին անհրաժեշտ է ամենախիստ կերպով սկիզբ դնել օրինականութեան եւ արդարութեան եւ կատարեալ անաչառութեան դէպի նուաճուած շրջաններում ապրող բոլոր ժողովուրդները: Ի հարկէ, առանց ջօշափելու Հայաստանի ինքնավարութեան խնդիրը Ռուսաստանի հովանաւորութեան տակ, որը, ամենայն հաւանականութեամբ, դեռ եւս չպիտի կիրառուի կեանքում եւ, իմ կարծիքով, միայն կարող է վտանգաւոր կերպով բարդացնել ներկայ պատերազմի ընթացքին ծագած հարցերի խաղաղ լուծումը, ես բոլորովին համաձայն եմ Ձեզ հետ, որ հարկաւոր է, եւ ըստ ամենայնի հնարաւոր է, հայերին արամազրել գպրոցական եւ եկեղեցական ինքնուրոյնութիւն, եկեղեցական գոյքերի եւ դրամների կառավարութիւն, լեզուից օգտուելու իրաւունք, պայմանով, սակայն, որ ուսերէն լեզուն վայելէ առաջնութիւն բոլոր պաշտօնական հանգամանքներում, այլ եւ քաղաքային ու դիւլական ինքնավարութիւն՝ պահպանելով ընտրութիւնների ժամանակ բնակչութեան տոկոսային համեմատութիւնը:

Ոչ-բրիտանական տարրերի նկատմամբ, ի հարկէ, պէտք է կիրառել միեւնոյն սկզբունքները՝ համաձայն տեղական պայմանների եւ նրանց մշակութային զարգացման:

Գալով այն խնդրին, թէ տեղական հողատիրութեան եւ ներգաղթի խնդիրները լուծման միջոցին պէտք է գործադրել միեւնոյն օրինականութիւնն ու անաչառութիւնը, ես, ի հարկէ, ամբողջապէս միանում եմ Ձեր արտայայտած կարծիքին: Յոյց տալու համար իմ համամտութիւնը Ձեր կարծիքին, ընդ ամին կցում եմ ի տեղեկութիւն Ձեր իմ սոյն տարուայ 19 Մարտ թիւ 121 հրամանի պատճէկը, սրով արգիւրում են ամէն տեսակ ինքնակամ գրաւումները նուաճուած շրջաններում:

Իրբեւ եզրակացութիւն չեմ կարող լուծութեան տալ, որ իրբեւ հետեւանք իմ մէջ ծագող լուրջ վախերի պարենաւորման տաղանայի մասին, որը լուրջ հետեւանքներ է սպառնում թէ՛ հայերին եւ թէ՛ Անդրկովկասեան երկրին, ես չեմ կարող չհրաւիրել ամենամբտահոգիչ ու շարքութիւնը այն բանի վրայ, որ ստաջն առնուի այդքան ծանր վտանգին: Ուստի եւ հէնց հիմա հրամայեցի քննութեան առնել հայ գաղթականների վերադարձի խնդիրը դէպի իրենց հողերը թիւրքիայից նուաճուած շրջանների սահմաններում՝ պայմանով, որ նրանց իրենց հայրենի կալուածներում ամրանալու հնարաւարութիւն տալուց յետոյ, գլալապէս թեթեւացուին գաղթականների պարենաւորման համար տրուող ծախսերը եւ միեւնոյն ժամանակ կենդանացուին թիւրքահայաստանի արգաւանդ հողերը, որ, անկասկած, լուրջ թեթեւութիւն կը տայ բանակի պարենաւորման գործին: Խորապէս Ձեզ յարգող Նիկոլայ»: (211-213):

\* \* \*

Այդ միջոցին տեղի ունեցաւ Սազոնովի հրաժարականը, եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան ղեկավարութիւնը անցաւ վարչապետ Բ. Ծախրմբերին:

Փոխարքան 15-18 Յուլիսին հեռագրով դիմում է սրան եւ խնդրում անմիջապէս պատասխանել, թէ՛ «համաձայն էք արդեօք Ձեր նախորդի կարծիքին, այլ եւ հաւանութիւն տալի՞ս էք իմ արտայայտած մտքերին»:

Ծախրմբերը 19 Յուլ. 1 Օգ. հեռագրով պատասխանում է.

«Ես ծանօթացայ ինչպէս Հոֆմէյստէր Սազոնովի մեծ իշխանին ուղղած գրութեան